79. ՔԱՉԱԼ ՃՈՏԸ

Ինըմ ա, չինըմ մին տոն։ Էտ տանը նանը միշտ հավ ար թոխսը տինըմ։ Մին դոնըմ էլ հավը թոխս ա տինըմ, ըսպասըմ միչև ճոտերը տուս կյալը։ Վեր ճոտերը տուս ըն կյամ, ըտրանց մեչին մին քաչալ ճոտ ա ինըմ։ Էտ քաչալ ճոտին յրան թեփուտ չի փսնըմ, ըտրա հետի էլ քաչալ ըն ասըմ։

Քաչալ ճոտին հընգյերնին մըծանըմ ըն, ամմա ինքյը մին օրիշ թաՎուր ա ինըմ, մին օրիշ հանգի, մին օրիշ թահրի, մին օրիշ շուտա։

Էտ քաչալ ճոտը բըրըշըմ չի հավերին նըհետ, ամմեն օր էլ էտ տանը մին վընաս ա տամ։

Տընատարը մին չի, էրկու չի, տըմանըմ ա։

Մին օր էլ քաչալ ճոտը կըտկոտըմ ա ուրան մար թուխսըկանին, ըսպանըմ։

Մին քանի օրանը ետըն էլ էն մընացած հավերին ա կըտկոտելավ ըսպանըմ։

Վերչը տընատարը յոր ա օնըմ, տանըմ բազար, վեր ծախի։ Բըզարըմը լոխ ասըմ ա, կյեղըմ չի քաչալ ճըտին ըրարմունքը։ Էտ բըզարըմը թաքավերին մարթկանցան ինըմ ա։

Ըտրանց անա մինը հընգյերին ասըմ ա.— Ե՛ք էս քաչալ ճոտը առնինք, տանինք տանք թաքավերին՝ ծըծըղցնելի հետի։

Իտի էլ անըմ ըն։

Թաքավերը վեր տրեսնըմ ա, մին լաՎ ծըծաղըմ ա։ Ըտրան տանըմ ըն քըցըմ հավերին պունը։

Թաքավերին տոնը ղոնաղ, պեն եկած վախտը տո̈ւս ըն օնըմ, ըտրանավ ծըծաղըմ։

Մին հետ էլ թաքավերին գյա̈ղա̈ն կյամ ա, կըլո̈խ տամ, ասըմ.

— Թաքավերը ապրած կըենա, էն քաշալ ճոտը կըտկոտալ ա լո̈խ հավերին, կըտորալ։

Էտ վեր լըսըմ ա, թաքավերը ըջըղվըմ ա, ասըմ ա.— Տարե՛ք, էտ քաշալ ճըտին ղազերին խառնեցիք, վեր ղազերը ընդրան կըրակոտին, սըտկըցնին։

Գյա̈դեքյը թաքավերին հրամանը կադարըմ ըն։ Քաշալ ճոտը ըտեղ էլ չի դինջա̈նըմ, մին քըշերվա մեչի լո̈խ ղազերին կըտորըմ ա, ինքյը մինա̈կ դինջըմը քոն ինըմ էտ ղազերին լեշերին յրան։

Էքյսը ղազ պահողնեն վեր պո̈ւնին տո̈ռնը պենըմ ըն, վխվըխելավ մին էլ ետ ըն տըեռնըմ, քյինըմ թաքավերին պալատը, չոքըմ թաքավերին առաչին, ընդրա վըենները պաչըմ, մին թա̈հրա̈վ ասըմ քաշալ ճըտին պեները։ Թաքավերը ըջըղվըմ ա, հրամմայըմ ա վեր քաշալ ճըտին տանին քըցին ծըմակը, վեր կյո̈ւլի, աղվեսի փայ ինի՛։

Ծըմակըմը քաշալ ճոտը մին աղվես ա տըեսնըմ, ասըմ. — Ճընապարաս տենը քյինի՛, թա̈ չէ քյըեղ կոլ կըտամ։

Աղվեսը ասըմ ա.— Տու հի՞նչ ըս, հի՞նչ զի̈թիլ ըս, հինչ օժի տա̈ր ըս, վեր ինձ կոլ տաս, ըստրան եշի... Քյըեղ մընան հազար թեփռավեր հավ ըմ կոլ տըվա՛լ, քյըղանա յը՞մ վախելո՛ւ։

Էտ վեր լըսըմ ա, քաշալ ճոտը յրա յա պըրծընըմ, աղվեսին կոլ տամ։ Ընգրանա ետը ո̈ւրա̈ն ճընապան քյինըմ։ Շատ ա քյինըմ, թա խըրեգյ, ճընապարին մին կյո̈ւլի յա թո̈ւշ ինըմ։

Էտ կյո̈ւլին հրամմայըմ ա, ասըմ.— Հեռաց ճընապարաս։

Կյո̈ւլըն ասըմ ա.— Քյըեզ մընան կըզտի-պըզտի պեներին հի՞նչ ծըեռք տամ, նըհախ տեղը թաթերըս յըխտուտցընիմ, էշեր ըմ կե-րա՛լ, պոզավեր-ընգըճավեր հեյվաննի յըմ կերա՛լ, կյումշնի՛, կովե՛ր, ծիյա՛նք, եզներ ըմ կերա՛լ, տու հի՞նչ ըս, հո̈ւնա̈րըտ հի՞նչ ա, վեր հա̈լա̈ ինձ յրա էլ ըջըղվըմ ըս։

Էտ վեր լըսըմ ա, քաշալ ճոտը յրա յա պըրծընըմ, կյո̈ւլին կոլ տամ, ինքյը ճընապար ընգնըմ, քյինըմ։ Քյինըմ ա, քյինըմ, մին վա-րար կյետի յա ռո̈ւջա̈հ կյամ։ Էտ կյետին հրամմայըմ ա վեր ցըմաքի, վեր ինքյը աղադ անց կենա։

Ասըմ ա.— Ա՛ կյետ, ըռըհելտ քաշի, վեր յըես անց կենամ։

Կյետը լո̈ւզու վա առնըմ, ասըմ.—Է՛ս հի՞նչ տընա̈զ պեն ա, յըես իմ վարար ճիրա̈վըս մարթկանց ըմ քըշա՛լ, պոզավեր-ընգը-ճավեր հեյվաննի յըմ քըշա̈՛լ, կյումո̈ւշնի, եզներ, կովեր, ծիյանք,

էշեր ըմ քըշա՞լ, մըհեկ տու հի՞նչ ըս, վեր ինձ նըհետ հոշա՞թ ըս տամ։ Վրեղրս կըլխիտ հա՞, կըլոխըտ մոշավ անի՞մ, քյինի ծառին տակին տըմկի՞։

Քաչալ ճոտը վեր էտ լըսըմ ա, թունդումը ըշըղվըմ ա, հու՞ու՞ վա անըմ, սաղ կյետը նի քաշըմ պոկը ընդըղան էլ փորը, օռչըմ, արռըղվըմ, անց կըենըմ, քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, հըսնըմ ա մին օրիշ թաքավերի պալատ։ էտ պալատին առաչին քըթոթ անելիս, մին վրեսկե յա ճարըմ, ծուղրուղու՞ յա կանչըմ, ասըմ.— Թաքավերըն ապրած կըենա, մին վրեսկե յըմ ճարա՞լ։

Թաքավերը լըսըմ ա, ուրան դյադոցը ըղըրկըմ ա, վեր քյինին էտ քաչալ ճոտան վրեսկեն ինքյ առնին, պերին։

Քաչալ ճոտը կանչըմ ա. — Ծուղրուղու՞, թաքավերը ինձանավ ա ապրը՞մ։

Էտ վեր թաքավերը լըսըմ ա, շատ ա հըմանչըմ։

Ասըմ ա.— Վրեսկեն ետ տըվեք, տըվեք էտ քաչալ ճոտին։

Գյադեքը վրեսկեն ետ ըն տամ։

Քաչալ ճոտը կանչըմ ա, ասըմ.— Ծուղրուղու՞ թաքավերը ինձանա վախըմ ա, վրեսկեն ետ տըվա՞վ։

Թաքավերը էտ վեր լըսըմ ա, թունդումը ըշըղվըմ ա, ասըմ.. — Քյինացիք պերիք էտ քաչալ ճըտին, տեսնամ տա հի՞նչ պեն ա,. վեր իտի կապը կըտրած ա, իրեսը պեց ա, անաբուռ, անհամանչ ա, իտի իրեսը պըռթըճիրա՞վ լըվա՞ցած ա, անիրես շոն ա, թաքավերին առաչը իոսկ կըտանի, մին պոլկ սալդաթի մեչի կըկենա, ախեր ասըմ ը՞ն, վեր օխծին կըլոխը ցավըմ ա, տանըմ ա, տինըմ ճընապարին մեչ տեղը, վեր քյինող-եկող կոխ տան, մըհեկ էտ քաչալ ճոտըն ա։

Գյադեքյը քյինըմ ըն, պերըմ։ Թաքավերը ըտրա յրան կըղնըվըմ ա, հրամմայըմ ա մորթին, կյերակուր իփին, հացին վախտը պերին, օտին։

Իտի էլ անըմ ըն։ Թաքավերը քաչալ ճըտին մըսան օտըմ ա։

Բողազավը քյինելիս, էտ քաչալ ճոտը կանչըմ ա.— Ծուղրուղու՞, թաքավերին բողազին նեղ տեղերավն ըմ քյինըմ։

Վեր թաքավերը կոլ ա տամ, քաչալ ճոտը թաքավերին փորըմը սկսըմ ա կանչիլը։ — Ծուղրուղու՞, թաքավերին փորավրն ըմ քյինըմ։

Թաքավերը լափ ըշըղվըմ ա, լափ հըմանչըմ, իրեսին աբուռը եր ա կյամ էն ղոնաղներին քըշտին։

Նա դյադա՞-դյուդին հրամմայըմ ա, ասըմ.— Վեր յրես զախոտ

Քյինիմ, եկեք, էս քաչալ ճըտին ծրեր թըրերավը թըխեցիք, ըսպանեցիք։

Գյաղա-գյուղեքյը իտի էլ անըմ ըն։

Քյինըմ ըն զախոտըմը ուրանց սոր-սոր թըրերավը մին հենց թըխըմ, վեր թաքավերին գյավակը կըտրըմ ըն։

Քաչալ ճոտը տուս ա կյամ, կանչըմ.— Մուղրուղու՛, բա իտի էլ պե՞ն կինի՛, գյավակը կըարած թաքավե՞ր կինի՛...